

Հանրային հանդիպում Սուրբ Էլիզաբեթ խնամքի կեդրոնի առաջարկուած վաճառքին եւ վերահսկողութեան փոխանցման վերաբերեալ:

Գլխաւոր դատախազը հանրային հանդիպում պիտի կազմակերպէ Յուլիս 21, 2026 թուականի առաւօտեան ժամը 10:00-ին, Սուրբ Էլիզաբեթ խնամքի կեդրոնին մէջ, որ կը գտնուի 10425 Մակնոլիա Պուլվարտ, Նորթ Հոլիվուտ, Քալիֆորնիա, 90601 հասցէին: Այս հանրային հանդիպումին նպատակն է մեկնաբանութիւններ ստանալ Սուրբ Էլիզաբեթ խնամքի կեդրոնի, 52 անկողիններով իրաւագործուած մասնագիտացուած խնամքի կեդրոնի վաճառքին վերաբերեալ: Գլխաւոր դատախազը կը վերանայի առաջարկուած վաճառքը՝ ընկերութեանց (Corporations) օրէնսգրքին 5914-րդ յօդուածի եւ յաջորդական բաժիններուն համաձայն:

Գնման պայմանագրին համաձայն՝ Փրովիտենսը պիտի ծախէ Սուրբ Էլիզաբեթը եւ անոր վերահսկողութիւնը փոխանցէ Էնզայն Կրուփ-ի յարակից ընկերութեանց: Վաճառքին յայտարարուած նպատակն է՝ իր համայնքներուն համար աւելի բարձրորակ հիւանդակեդրոն խնամքի շարունակական հասանելիութիւն ապահովել, ի տես գործունէական եւ տնտեսական մարտահրաւերներուն, ապահովելով արտաքին գլխադիր ներդրումներ՝ հաստատութեան վաճառքին միջոցով:

Անհատներ կրնան՝ եւ խրախուսելի են որ ներկայացնեն իրենց տեսակէտները, այս առաջարկուած գործարքին (վաճառքին) վերաբերեալ՝ յիշեալ հանրային հանդիպման ժամանակ, եւ կամ կապուելով գլխաւոր դատախազի տեղակալ Հայտի Լեիրմանին հետ՝ 916-210-7835 հեռախօսի թիւով, կամ Heidi.Lehrman@doj.ca.gov կամ HealthTransactions@doj.ca.gov էլէկտրոնային փոստով, եւ կամ 1300 I Street, Sacramento, CA 95814 հասցէով: Գրաւոր մեկնաբանութիւններու ստացման վերջնաժամկէտը Յուլիս 26, 2026-ն է: